ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022Թ. ԱՊՐԻԼԻ 26-29-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անուն, ազգանունը՝ Կարեն Ալավերդյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2022թ. ապրիլի 26-29-ը

4. Հրավիրող կողմը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն ԵԱՏՄ Ֆինանսական շուկաների գծով Խորհրդատվական կոմիտեին կից ԵԱՏՄ անդամ երկրներում աուդիտի բնագավառում և հաշվապահական հաշվառման ոլորտում ծառայությունների մատուցման միասնական շուկայի ձևավորման աշխատանքային խմբի հերթական նիստին:

6. Քննարկված թեմաները՝

- «ԵԱՏՄ անդամ երկրների տարածքում աուդիտորական գործունեության բնագավառում վարչական համագործակցության» համաձայնագրի նախագծի քննարկում,
- ԵԱՏՄ անդամ պետություններում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության բնագավառում ծառայություններ մատուցողների նկատմամբ ներդաշնակեցված պահանջներ սահմանելու նախագծի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- ԵԱՏՄ Ֆինանսական շուկաների գծով Խորհրդատվական կոմիտեին կից ԵԱՏՄ անդամ երկրներում աուդիտի բնագավառում ծառայությունների մատուցման միասնական

շուկայի ձևավորման աշխատանքային խմբի հերթական նիստի ընթացքում քննարկվեցին «Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տարածքում աուդիտորական գործունեության բնագավառում վարչական համագործակցության» համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը, աշխատանքային քննարկման և մտքերի փոխանակման արդյունքում ձևավորված նոր առաջարկությունները, որոնք կներկայացվեն կողմերի համաձայնեցմանը՝ աշխատանքային նիստի արձանագրությամբ:

- Աշխատանքային խմբի անդամների կողմից մանրամասն քննարկվել է անդամ պետություններում աուդիտի որակի համատեղ հսկողության հետ կապված ընթացակարգերը, գործընթացում հնարավոր խոչընդոտներն ու դրանց հաղթահարման ուղիները:
- Աշխատանքային խումբը քննարկել է նաև հաշվապահական հաշվառման բնագավառում միասնական շուկայի ձևավորման հետ կապված հարցերը, մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ պետություններում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության բնագավառում ծառայություններ մատուցողների նկատմամբ ներդաշնակեցված պահանջներ սահմանելու նախագիծը: Արձանագրվել է աշխատանքային խմբի անդմաների գերակշիռ մեծամասնության դիրքորոշումն առ այն, որ հատուկ կարգավորում պահանջող կազմակերպություններում որակյալ ֆինանսական տեղեկատվություն ապահովելու համար ծառայություններ մատուցող սուբյեկտների նկատմամբ պետք է սահմանվեն համեմատաբար խիստ պահանջներ:

Հանդիպման արդյունքները և առաջարկությունները

Հանդիպումների ընթացքում, որպես աշխատանքային խմբի անդամ ներկայացրել եմ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումն ու առաջարկությունները վերոնշյալ համաձայնագրի նախագծում ամրագրված դրույթների վերաբերյալ, ինչպես նաև հաշվապահական հաշվառման բնագավառում միասնական շուկայի ձևավորմանն ուղղված քայլերի վերաբերյալ: Մասնավորապես, ներկայացվել է, որ ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջ ունեցող կազմակերպություններին հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցելու համար համապատասխան մասնագետը կամ խմբի ղեկավարը պետք է ունենա աուդիտորի որակավորում:

Քննարկումների արդյունքում որոշում է կայացվել ԵԱՏՄ հանձնաժողովի աշխատակազմի կողմից ամփոփել քննարկման արդյունքները, լրամշակել վերը նշված համաձայնագրի նախագիծը և ներկայացնել աշխատանքային խմբի անդամներին՝ առաջիկա նիստին քննարկելու նպատակով:

8. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ Կարեն Ալավերդյան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը **03.05.2022թ.**

X _____